



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Փոխլրացնող զուգահեռներ՝ անվտանգություն, բարեկեցություն և արդարություն

Հանրային հավաքական դաշտում կեցության և զարգացման համար ցանկալի մթնոլորտի ստեղծումը պայմանավորվում է երեք անհրաժեշտ բաղադրիչների՝ անվտանգության, բարեկեցության և արդարության առկայությամբ: Յուրաքանչյուր գաղափարական հոսանք իր համոզմունքներից և սկզբունքներից ելնելով՝ իր ուրույն մեկնաբանությունն ունի այդ բաղադրիչների իմաստների վերաբերյալ և փորձել ու փորձում է կառավարման համակարգում ներդրել գործոններ՝ հնարավորություն ստեղծել նշյալ բաղադրիչներով մթնոլորտ ձևավորելու համար: Վերջին հաշվով, պետությունների գոյությունը հենց այդ մթնոլորտի ձևավորման գործառնություն է իմաստավորվում:

Առանձնաբար անդրադառնանք պետության գոյությունն իմաստավորող գործառնություններին:

Անվտանգությունը լայն հասկացություն է, սակայն պարզեցված առումով կարելի է լինելիության և գոյատևման երաշխավորությամբ իմաստավորել այն: Ապրելը իրավունք է. դա թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեւոր կյանքի իրավունք է: Երբ բռնություն է գործադրվում կյանքի, ապրելու իրավունքի նկատմամբ՝ դա անվտանգության խախտում է համարվում: Պետությունը պարտավոր է երաշխավորել յուրաքանչյուր անհատի և հանրության կյանքի ապահովության իրավունքը՝ զերծ պահելով թշնամու ոտնձգություններից:

Բարեկեցության երաշխավորը ևս պետական համակարգն է: Հանրային ծառայությունները՝ լայն առումով, իսկ մասնավորաբար՝ առողջապահությունը, կրթությունը, կենցաղային պայմանների ապահովումը պետական կառավարման համակարգի կարեւորագույն գործառնություններից են, որոնց շնորհիվ յուրաքանչյուր անհատի տրվում է բարեկեցիկ պայմաններում ստեղծագործելու կամ պարզապես ապրելու հնարավորություն:

Իսկ հանրության մեջ միասնական հոգսերով ապրելու, զարգանալու և միասնական ցավ ու բերկրանք զգալու գաղտնիքը միայն այնքան կարող է շոշափելի դառնալ յուրաքանչյուր անհատի մոտ, երբ տիրում է արդար մթնոլորտ: Արդարության հաստատման համար պետական կառուցվածքում ստեղծվել են համակարգեր՝ հանցավորին պատժելու, հարստությունն արդար բաշխելու և, վերջապես, արդար դատելու նպատակով:

Անվտանգության, բարեկեցության և արդարության ապահովումը առանձնաբար կարեւոր են և անհրաժեշտ, սակայն, միեւնոյն ժամանակ, ընդհանրության մեջ այս երեք գործոնները փոխլրացման և փոխադարձ համատեղության պայմանում են արդարացվում: Այլ խոսքով՝ որեւէ մեկի բացակայությունը խաթարում ու թերի է դարձնում մյուսի լինելիությունը:

Արցախը 2020 թվականի պատերազմից հետո գտնվում է ճգնաժամային իրավիճակում: Պետական գործառնությունները հաճախ իրականացվում են պահի թելադրանքից ելնելով: Պետական մակարդակով կայացվող որոշումները հաճախ առօրեական են: Այս գործելաոճը անհեռանկարային է և չի կարող ապահովել ակնկալվող արդյունքը: Պետք է ի նկատի ունենալ, որ վերը նշված բաղադրիչներից միայն մեկի կիրառումը, այս պարագայում՝ միայն բարեկեցության համար տարվող աշխատանքը չի կարող սպասված արդյունքն ապահովել: Չի ստացվի շաբաթական երկու անգամ ՀՀ կառավարության մոտ հայրենիքից բռնի տեղահանված հայրենակիցների բողոքի ակցիաների առկայության դեպքում գովազդել բնակարանաշինությունը Ստեփանակերտում: Անընդունելի է Արցախի բարձրաստիճան պաշտոնյայի այն արտահայտությունը, ըստ որի՝ «Արցախի բնակչությունը պետք է իմունիտետ ձեռք բերի անորոշության մեջ ապրելու համար»: Դա ուղղակի հարվածում է անվտանգությանը, իսկ այս պարագայում բարեկեցությանը միտված բնակարանաշինությունն էլ, աշխատավայրի ստեղծումն էլ, մեղմ ասած, ջուրն են ընկնում: Բնակարանաշինությանը զուգահեռ՝ արդեն խոսվում է բնակարանների բաշխման հարցում խնամի-ծանոթ-բարեկամ հարաբերությունների մասին, կամ փոխհատուցումների հերթերը խախտվում են թիմակից լինելու կամ չլինելու պատճառով: Երբ պակասում է արդարության հանդեպ վստահությունը, այլևս ի՞նչ բարեկեցություն:

Հեռանկար ունենալու և արդյունավետ աշխատելու համար երեք զուգահեռներով տարվող աշխատանքները պետք է համահունչ լինեն ու համադրված և փոխլրացնեն միմյանց:



## Չինվել հարատև պայքարի ոգով. ՀՀԴ Բյուրո

Այսօր մեկ անգամ ևս Հայաստանն ու հայությունը ակնատես եղան Ադրբեջանի արհեստածին հանրապետության նկրտումներին, որին, ցավոք, զոհ գնացին մեր ազգի արիագույն տղաները, բռնագրավվեցին պետության տարածքներ: Ո՛չ միայն աշխարհը գիտի, այլ ամենից լավ հենց ինքը՝ Ադրբեջանն է գիտակցում, որ եթե չլինեին ու չլինե՞ն շահագրգիռ տարբեր երկրների ու ուժերի անմասցորդ հովանավորությունը, ինքը ոչինչ է հայ զինվորի բազկի առջև:

Հայությունը՝ ի Հայաստան և ի Սփյուռու աշխարհի, պարտավոր է ազգային բարձր գիտակցությամբ համախմբվել, բռնուցք դառնալ, բոլորանվեր աջակցել հայոց բանակին և ամենուրեք պաշտպանել Հայաստանի և հայության շահերը՝ ընդդեմ Ադրբեջանի, Հայոց ցեղասպանությունն իրականացրած և մեր հայրենիքի մեծ մասը զավթած Թուրքիայի և նրանց տարատեսակ հովանավորների: Ազգային միասնականությամբ պետք է մերժել ՀՀ իշխանավորների կողմից Հայաստանի պետության ազգային և հայության շահերի դեմ՝ թշնամիների հետ ստորագրված ցանկացած նոր փաստաթուղթ:

Խոր ցավով ենք արձանագրում կրկին, որ Հայաստանի և հայութեան գլխին եկած վերջին պատուհասը արդյունքն է ՀՀ իշխանության տհաս, անհեռատես, պարտվողական և մեծամիտ մտայնության և քաղաքականության, որը ոչ միայն անընդունելի, այլ դատապարտելի է: Պետք է վերջ տալ ազգը պառակտելու քաղաքականությանը, ինչպես նաև՝ արտաքին դաշնակիցների ու գործընկերների

հետ երկիմաստ և ոչ պատշաճ ընթացակարգերով հարաբերվելու վարքագծին: Պետք է մանավանդ ետ կանգնել թշնամիների հետ զիջողական, հայրենավնաս քայլերից:

Կոչ ենք ուղղում բոլոր արդարամիտ ու տարածաշրջանի իսկական խաղաղությամբ նախանձախնդիր պետություններին՝ դատապարտել Ադրբեջանի հարձակումները Հայաստանի վրա և քայլեր ձեռնարկել դրանց առաջն առնելու համար:

Կոչ ենք ուղղում ՄԱԿ-ին, Ընկերվար միջազգայնականին և միջազգային մարդկային իրավունքների բոլոր կազմակերպություններին, եթե տակավին հավատարիմ են իրենց արժեքներին և հայտարարած համոզումներին, բողոքի ձայն բարձրացնել հայության դեմ կատարվող անարդարությունների նկատմամբ:

Հանձնարարում ենք մեր Հայ դատի բոլոր գրասենյակներին և հանձնախմբերին՝ պատկան երկրների ներկայացուցիչներին բացատրել իրականությունը, պահանջել աներկբա դատապարտում, և նոր թափ հաղորդել Հայ դատի պայքարին:

Եւ, ի վերջո, կոչ ենք ուղղում վերջին ամսվա ընթացքում աշխարհով մեկ բողոքի ցույցեր և հավաքներ իրականացնող հայ երիտասարդությանը՝ չհիասթափվել, զինվել հարատև պայքարի ոգով և վճռակամ ու միասնական ճիգերով պաշտպանել հայրենիքը և աներեք հետապնդել Հայ ազգի անժամանցելի և արդար իրավունքների պաշտպանությունն ու ձեռքբերումը:

ՀՀԴ Բյուրո  
16 նոյեմբեր, 2021 թ.

## Մենք սկզբնավորում ենք համազգային դիմադրություն Հայաստանում, Արցախում, Սփյուռքում



Արտաքին վտանգները չեզոքացնելու, Արցախի հայաթափումը, Հայաստանի թուրքացումը բացառելու, ներքին կյանքում համերաշխություն հաստատելու, հայությունը համախմբելու նպատակով մենք սկզբնավորում ենք համազգային դիմադրություն Հայաստանում, Արցախում, Սփյուռքում...

Կարդացեք 2-րդ էջում

## ԱՀ ԱԺ-ն ընդունել է «Արցախի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու անօտարելի իրավունքի մասին» հայտարարություն



Կոչ ենք անում միջազգային հանրությանը, ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրի երկրների, անհետաձգելի քայլեր ձեռնարկել Արցախի իշխանությունների մասնակցությամբ բանակցային գործընթացը վերսկսելու և հիմնախնդիր համապարփակ լուծումն ապահովելու նպատակով...

Կարդացեք 3-րդ էջում

### Համազգային դիմադրության սկիզբ

Նոյեմբերի 8-ին Ազատության հրապարակում կայացել է «Հայաստան» դաշինքի կազմակերպած հանրահավաքը, որով ընդդիմությունը սկիզբ է դնում համազգային դիմադրությանը: Նախքան հանրահավաքի մեկնարկը, ներկայները մեկ րոպե լռությամբ հարգեցին 44-օրյա պատերազմում հանուն հայրենիքի զոհված հերոսների հիշատակը: Օրը պատահական չէր ընտրված. մեկ տարի առաջ, այդ օրը ստորագրվել էր կապիտուլյացիոն հայտնի փաստաթուղթը:

«Եկեք պայմանավորվենք՝ այստեղից՝ Ազատության հրապարակից հիմք ենք դնում համազգային դիմադրությանը», - իր ելույթում հայտարարեց ՀՀԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ, Աժ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Աժ փոխնախագահ Իշխան Սաղաթեյանը:

Ելույթի սկզբում նա արձանագրեց, որ մեկ տարի առաջ՝ սեպտեմբերի 27-ին, հայ մարդը, հայ ազգը ամեն ինչ արեց այդ պատերազմում հաղթանակ ունենալու համար. պատերազմ գնացին հայր ու որդի, պապ ու թոռ, երկու եղբայր միասին, գնացին գիտակցումով, գնացին հանուն հայրենիքի, գնացին, որպեսզի հայ մարդը ապրի, արարի, զարգանա իր սեփական հայրենիքում, գնացին, որպեսզի ունենան հայկական Արցախ եւ Հայաստան:

«Ցավոք, Հայաստանի իշխանության ղեկին հայտնված խմբակը իր անկարողությամբ, դավաճանությամբ ու անգործությամբ երկիրը տարավ կապիտուլյացիայի», - ասաց Իշխան Սաղաթեյանը:

«Մենք միասին 8 ամիս շարունակ փողոցում պայքարել ենք, բայց դեռ մեր Նպատակին չենք հասել: Մեր քայլերի եւ գործողությունների արդյունքում, բայց ոչ երբեք մեր պայմանավորվածությունների կամ մեր որոշման, երկրում տեղի ունեցավ ընտրություն: Մենք այդ ընտրությունը դիտարկեցինք իբրեւ միջոց եւ հնարավորություն այս իշխանություններին հեռացնելու: Ցավոք, այդ ընտրություններին հաղթեց սուտն ու կեղծիքը, պոպուլիզմն ու ամբոխավարությունը, վարչա-

կան լծակներն ու բռնաճնշումները: Եվ այս իշխանությունը վերարտադրվեց՝ երկիրը տանելով նոր կորուստների ու նոր զիջումների», - ասաց Իշխան Սաղաթեյանը:

Նա ընդգծեց, որ ընտրություններից հետո շարունակվում են մեր կորուստները, թշնամի շարունակում է ագրեսիան Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ, այս իշխանությունների կողմից չկա դի-



մադրություն, չկա պայքար. կեղծ, ինքնահռչակ, ցնորամիտ խաղաղասիրության գաղափարներով երկիրը փորձում են տանել նոր կապիտուլյացիայի:

Այս մեկ տարվա ընթացքում իշխանությունը, պատերազմին գնահատականներ տալու փոխարեն, պարտության բեռը փորձեց բարդել Նախկինների, բանակի վրա: «Հայաստան» դաշինքի կազմակերպած հանրահավաքի ժամանակ հայտարարեց «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

«Բանակը կառուցվել է, Արցախ ազատագրել, Հա-

յաստանի սահմաններն է անառիկ պահել, Հայաստան-Արցախ անվտանգային մի հզոր միջավայր ձեւավորել, որը մեր տարածաշրջանում գործոն է եղել: Հիմա այլ գործոն է՝ Հայաստանն առանց Արցախի կամ Արցախը անկախային վիճակում: Այս իշխանություններն են բանակը քանդել, ամեն օր հարվածել բանակին՝ կաղերային հրամանատարների, ԳՇ պետի, տեղակալների արագ փոփոխություններով եւ քաղաքական կախվածության մեջ դնելով նրանց: Կառուցվածքային փոփոխություններով ուռճացրել են համակարգը եւ իրենց քաղաքականությանը համահունչ՝ բանակը փիռաճի մակարդակի հասցրել՝ նրա զարգացման գործընթացն իջեցնելով սովորական տնտեսական մակարդակի: Եվ սա է պատճառներից մեկը, որ պարտություն կրեցինք: Պարտվեց ոչ թե բանակը, այլ պետությունը», - ասաց պաշտպանության նախկին նախարարը՝ հավելելով, որ կառավարման ցածր մակարդակով, պետության հնարավորությունները ռազմական ռեյսերի վրա չլինելով ու բանակին մենակ թողնելով իշխանությունը պետությանը տարավ պարտության:

«Հայաստան» դաշինքի հրավիրած հանրահավաքի ժամանակ ելույթ է ունեցել նաեւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոհարյանը:

Անդրադառնալով ընդդիմության անելիքներին, երկրորդ նախագահն ասաց, որ իրենց խնդիրն է համոզել ժողովրդին, ցույց տալ, որ իրենց խաբել են, որ այս իշխանությունը դավաճանել է սեփական կարգախոսներին: «Մենք բոլորս պետք է միավորվենք, պետք է այս դիմադրության շարժմանը ուժ հաղորդենք՝ ամեն մեկն իր հնարավորությունների չափով: Պայքարելու ենք, եւ վստահ եղեք, սրանց մենք վնասելու ենք կամ բարիկաղներով, կամ ընտրություններով: Այդ բարիկաղներում ես ձեր կողքին, ձեր առաջին կանգնած եմ լինելու: Ամեն ինչ լավ է լինելու», - ասաց Զոհարյանը:

Տարբերակ ԱՐԱՋԱՆՅԱՆ

### Մենք սկզբնավորում ենք համազգային դիմադրություն Հայաստանում, Արցախում, Սփյուռքում. «Հայաստան» դաշինք

«Հայաստան» դաշինքի՝ Ազատության հրապարակում նախաձեռնած հանրահավաքի ավարտին ընդունվել է հայտարարություն.

Հիմք ընդունելով հայ ժողովրդի միասնական կամքն արտահայտող՝ Հայաստանի անկախության եւ ԼՂՀ հռչակման մասին հռչակագրերը, վերահաստատելով Հայաստանի եւ հայ ժողովրդի անքակտելի իրավունքներն ու կենսական շահերը պաշտպանելու հանձնառությունը,

#### Հաշվի առնելով՝

- Ադրբեջանի եւ Թուրքիայի սանձազերծած պատերազմի հետեւանքով տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական լրջագույն մարտահրավերները,
- Քաղաքական-տնտեսական էքսպանսիա իրականացնելով՝ տարածաշրջանում հաստատվելու՝ Թուրքիայի նկրտումները,
- 44-օրյա պատերազմի արդյունքներից առավելագույնն ստանալու՝ թուրք-

վերսկսելու՝ Ադրբեջանի փորձերը,

#### Արձանագրելով, որ՝

- Հայաստանում հաստատվել է մեկ մարդու իշխանություն, պետական ինստիտուտները կազմալուծված են,
- Ուժային կառույցները ծառայեցվում են իշխանությունը պահելու միակ նպատակին,
- Հայաստանն այլևս իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետություն չէ,

#### Համոզված լինելով, որ՝

- Հայաստանի եւ հայության կողմից կենսական զիջումներ ենթադրող որեւէ գործընթացի վերջնարդյունքը հայոց պետականության փլուզումն է,
- Հայաստանի՝ որպես ազգային եւ ինքնիշխան պետության զարգացման երաշխիքը նրա աշխարհաքաղաքական նշանակության եւ սերունդների իրավունքների պահպանումն ու ամրապնդումն է,
- Հայաստանի եւ Արցախի գոյության ու անվտանգության հիմնահարցերը փոխկապակցված են,
- Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման, կայուն խաղաղության ապահովման երաշխիքը ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի անվերապահ կիրառումն է՝ բացառելով Ադրբեջանի կազմում Արցախի՝ որեւէ կարգավիճակով ամրագրումը,
- Անհրաժեշտ է վերականգնել Արցախի ժողովրդի անվտանգությունն ու ինքնորոշման իրավունքի իրացումը երաշխավորելու՝ Հայաստանի հանձնառությունը,
- Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ներկայացնող որեւէ անձ

Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված ընթացակարգերի խախտումով չի կարող ստորագրել քաղաքական կամ ռազմական բնույթի որեւէ փաստաթուղթ,

#### Հանրահավաքը հայտարարում է.

Արտաքին վտանգները չեզոքացնելու, Արցախի հայաթափումը, Հայաստանի թուրքացումը բացառելու, ներքին կյանքում համերաշխություն հաստատելու, հայությանը համախմբելու նպատակով մենք սկզբնավորում ենք համազգային դիմադրություն Հայաստանում, Արցախում, Սփյուռքում:

Նպատակն անփոփոխ է՝ հեռացնել պարտության խորհրդանիշ ուժին, վերականգնել Հայաստանի ինքնիշխանությունն ու հայ մարդու արժանապատվությունը: Սա մեկ ուժի, մեկ դաշինքի դիմադրությունն է, յուրաքանչյուր արժանապատիվ հայ մարդու գործն է:

Մինչեւ հաղթանակը՝ այս պայքարը կարող է մեկ շաբաթ կամ ամիսներ տևել: Սա ենթադրում է յուրաքանչյուրիս հետեւողական, ամենօրյա աշխատանք եւ գործողություն:

Մենք սկսում ենք կազմակերպվել: Մեր ներկայությունն Ազգային ժողովում ծառայելու է դիմադրության հզորացմանը: Պահը հասունացավ՝ պայքարը կտեղափոխվեք միայն փողոցներ ու հրապարակներ:

Պարտության խրիղանիշ վարչախումբը հեռացվելու է: Սյունիքը չի զիջվելու, Արցախը չի հայաթափվելու, Հայաստանը չի թուրքացվելու:

Հայաստանը լինելու է ինքնիշխան պետություն, հայ մարդն ապրելու է արդար, ուժեղ երկրում: Հայ մարդն աշխարհում քայլելու է գլուխը բարձր:



#### Նկատի ունենալով, որ՝

- Այս իշխանությունն աղետաբեր է Հայաստանի, Արցախի ու հայության համար,
- Պարտության խորհրդանիշ ուժը չի կարող խաղաղություն, արժանապատվություն, զարգացում ապահովել,
- Իշխանությունը պահելու համար իշխող ուժը պատրաստ է գնալ նորանոր զիջումների եւ ինքնիշխանության կորստի,

ադրբեջանական տանդեմի նպատակը, այն է՝ Արցախի հայաթափումն ու Հայաստանի հանդեպ տարածքային հավակնությունները բավարարելը,

- Արցախյան հակամարտության Եուրոպայի եւ ձեւաչափի միջազգային ընկալումից, խաղաղ կարգավորման գործընթացի հիմնարար սկզբունքներից Ադրբեջանի հրաժարումը,

- ՌԴ խաղաղապահ առաքելությունը սահմանափակելու եւ պատերազմ

# ԱՅ ԱԺ-ն ընդունել է «Արցախի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու անօտարելի իրավունքի մասին» հայտարարություն

Նոյեմբերի 9-ին Արցախի Հանրապետության Խորհրդարանը միաձայն ընդունեց ԱՅ ԱԺ հայտարարությունը «Արցախի ժողովրդի ազատ ու անկախ ապրելու անօտարելի իրավունքի մասին»: Հայտարարությունն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Հ Ա Յ Ա Ժ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը ԱՐՑԱՒԻ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏ ՈՒ ԱՆԿԱՒ ԱՊՐԵԼՈՒ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ԻՄԱՍԻՆ**

2020 թվականի աշնանը Ադրբեջանը, Թուրքիայի և միջազգային ահաբեկչական խմբավորումների աջակցությամբ, անտեսելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, ագրեսիա է իրականացրել Արցախի Հանրապետության հանդեպ և 44 օր տևած պատերազմի արդյունքում բռնազավթել է հանրապետության տարածքի մեծ մասը:

Իր պատմական հայրենիքից Արցախի բնակչության բռնի տեղահանության պատճառով հազարավոր ընտանիքներ են ունեզրկվել և հայրենագրվել, ոչն-

չացվել ու պղծվել են ազգային-մշակութային և քրիստոնեական հարյուրավոր հուշարձաններ ու կոթողներ:

Մեկ տարի առաջ՝ Նոյեմբերի 9-ին, Ռուսաստանի Դաշնության Նախագահի միջնորդությամբ ադրբեջանա-դարբադյան հակամարտության գոտում հաստատված զինադադարով կասեցվել է արյունահեղությունը: Այդուհանդերձ, մեր խորին համոզմամբ, Արցախի ժո-

ղովրդի ֆիզիկական անվտանգության սպառնալիքը կարող է կանխվել, եւ տարածաշրջանում ապրող ժողովուրդների միջեւ տեսական խաղաղություն կարող է հաստատվել միմյալիս Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման, գերեզարկված մեր հայրենակիցների ու բռնի տեղահանվածների հայրենի օջախներ վերադարձնելու և ազգերի ինքնորոշման

իրավունքի հիման վրա հակամարտության կարգավորման պարագայում:

Կոչ ենք անում միջազգային հանրությանը, ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների, անհետաձգելի քայլեր ձեռնարկել Արցախի իշխանությունների մասնակցությամբ բանակցային գործընթացը վերսկսելու և հիմնախնդրի համապարփակ լուծումն ապահովելու նպատակով:

Ոգեկոչելով հայրենիքի համար իրենց կյանքը նվիրաբերած բոլոր նահատակների հիշատակը և արձանագրելով Արցախի ինքնիշխանության հռչակման ու դրան հաջորդած գործընթացների օրինականությունն ու համապատասխանությունը միջազգային և ներպետական իրավական նորմերին՝ Արցախի Հանրապետության Ազգային ժողովը՝ որպես բարձրագույն ներկայացուցչական մարմին, վերահաստատում է ազատ ու անկախ Արցախը պահպանելու 1988 թվականին ստանձնած հանձնառությունը և Արցախի Հանրապետության ժողովրդի վճռականությունը՝ հայրենի հողում ազատ ապրելու և արարելու իր իրավունքը պաշտպանելու գործում:

09 նոյեմբերի, 2021թ. Է. Ստեփանակերտ



# ՀՅԴ-ն աշխարհի տարբեր անկյուններում գորակցում է հայրենիքում ձեւավորվող ազգային դիմադրությանը

2020թ. նոյեմբերի 9-ին՝ 44-օրյա պատերազմի ավարտին եռակողմ կապիտուլյացիոն պայմանագրի ստորագրումից անցել է մեկ տարի: Այս խայտառակ պայմանագրի ստորագրումից հետո էլ շարունակվել է կապիտուլյանտ իշխանությունների կողմից հայկական հողերի հանձնումը, ազգային անվտանգությանը սպառնացող զինամեթոդ: Նկատի ունենալով Հայաստանի և Արցախի անվտանգային լրջագույն խնդիրները, Ադրբեջանի և Թուրքիայի հետ ՀՀ իշխանությունների բացահայտ և կուլիսային պայմանավորվածությունների հարուցած վտանգներն ու հնարավոր անդառնալի հետեւանքները՝ ՀՀ-ն կառուցում է աշխարհի տարբեր անկյուններում նոյեմբերի 8-9-ը կազմակերպել է ակցիաներ՝ ի գորակցություն հայրենիքում ձեւավորվող ազգային դիմադրության՝ ընդգծելով հայրենիքի, Սփյուռքի միասնականությունը, համախմբվածությունը Հայաստանի, Արցախի և համայն հայության իրավունքների պաշտպանության հարցում:

դրեց համազգային դիմադրությանը:

ՀՀ-ն Արցախի երիտասարդական միությունը կոչով դիմել է աշխարհասփյուռ հայությանը՝ հիշեցնելով, որ 1988-ին սկսված մեր ազգային-ազատագրական պայքարն ի վերջո պիտի պսակենք հաղթանակով՝ չնայած ունեցած կորուստներին ու ստեղծված ծանր իրավիճակին: ՀՀ-ն ԱԵՄ-ը վստահ է, որ ազգային արժեքներով սնվող այս ժողովրդի միասնական կամքի ու պայքարի հաղթանակը կանխորոշված է:



տահայտեց նոյեմբերի 7-ին Հունաստանի խորհրդարանի առջև գտնվող՝ Աթենքի կենտրոնական Սինտադմա հրապարակում, որտեղից և սկիզբ առավ ժողովրդային երթ, որը շարժվեց դեպի թրքական դեսպանատուն:

Նոյեմբերի 8-ին Ազատության հրապարակում տեղի ունեցավ «Հայաստան» դաշինքի կազմակերպած բազմամարդ հանրահավաքը, որով ընդդիմությունը սկիզբ

շորակցելով Հայաստանում սկսված դիմադրության շարժմանը, ՀՀ-ն Լիբանանի երիտասարդական միության և Չավարյան ուսանողական միության կազմակերպությամբ՝ Լիբանանում Հայաստանի դեսպանատան դիմաց տեղի ունեցավ բողոքի լուռ նստացույց: Ցուցարար երիտասարդները գիշերեցին դեսպանատան դիմաց, իսկ առավոտյան Լիբանանում Հայաստանի դեսպանին բողոքագիր հանձնեցին:

ՀՀ-ն Ֆրանսիայի «Նոր սերունդ» միությունը նոյեմբերի 9-ին Փարիզում ՀՀ դեսպանատան դիմաց կազմակերպել էր բողոքի ակցիա, որի մասնակիցները հանդես են եկել «Ասենք Ո՛Չ մեր հողերի հանձնմանը, Ո՛Չ նոր համաձայնագրի ստորագրմանը» և այլ կարգախոսներով: ՀՀ-ն Ֆրանսիայի «Նոր սերունդ»-ի ներկայացուցիչները Ֆրանսիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի միջոցով բողոքագիր են ներկայացրել ՀՀ իշխանություններին:

ՀՀ-ն Կանադայի «Արմեն Գարո» ուսանողական միությունը Կանադայում ՀՀ դեսպանատան դիմաց կազմակերպել էր բողոքի ակցիա Ադրբեջանի շարունակվող ագրեսիայի դեմ:

ՀՀ-ն Հայ Երիտասարդաց Դաշնակցության ԱՄՆ Արևելյան շրջանի Կենտրոնական գործադիր մարմին

անդամները ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Լիլիթ Մակունցի հետ առանձնազրույցի ժամանակ պաշտոնապես հայտնել են իրենց լուրջ մտահոգությունը հայ ազգի ճակատագրի վերաբերյալ:

Միության նախաձեռնությամբ բողոքի ակցիաներ են կազմակերպվել Վաշինգտոնում, Նյու Յորքում և Չիկագոյում:

ՀՀ-ն Հայ Երիտասարդաց Դաշնակցության ԱՄՆ-ի Արևմտյան շրջանի Կենտրոնական գործադիր մարմնի անդամները հանդիպել են Լոս Անջելեսում Հայաստանի գլխավոր հյուպատոս, դեսպան Արմեն Բայբուրյանի հետ՝ փոխանցելու պահանջատիրություն, որն արտացոլում է հայ համայնքի վերաբերմունքը Փաշինյանի ռեժիմի հանդեպ: Միության անդամները նաև բողոքի ակցիա են կազմակերպել հյուպատոսարանի դիմաց:

ՀՀ-ն Նիդեռլանդների «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միությունը բողոքի ակցիա է կազմակերպել Հայաստանի դավաճան կառավարության և անխոհեմ զինուժների դեմ: Հնչել են «Նիկոլ Վասակ», «Ո՛չ հայաստանի թրջացմանը», «Հայրենիք չունենք վաճառելու», «Ապիկարներ, հեռացե՛ք», «Կապիտուլյանտ, հեռացի՛ր», «Ալիեյը կիրթ, դու՛ դավաճան» և այլ կարգախոսներ: Միությունը նաև տեսաուղերձ է տարածել, որտեղ ասվում է՝ Արցախի վարչական միավորների հայկական անվանումներն օգտագործել, ոչ թե ադրբեջանականը:

Կորուսավիրուսով պայմանավորված՝ մի շարք երկրներում տեղի են ունեցել օնլայն արշավներ:

Կահազն ԽԱՉՍՏՅԱՆ

# 40000 տեղահանված ազգաբնակչություն ունենալով՝ չի կարելի խոսել մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ մակարդակի մասին

«Ապառաժ»-ը Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի հետ զրուցել է հետպատերազմյան շրջանում ՄԻՊ հաստատության առջև ծառայած խնդիրների, օկուպացիայի և պատերազմի հետևանքով Արցախի ժողովրդի իրավունքների խախտման, դրանց բարձրաձայնման գործում ՄԻՊ գրասենյակի կատարած աշխատանքի և այլ հարցերի շուրջ: Հարցազրույցը ներկայացնում ենք ստորև:

**- Դուք ԱՀ ՄԻՊ եք ընտրվել Արցախի համար դժվար ժամանակներում, երբ հատկապես Ձեր համակարգի առջև մեծաթիվ խնդիրներ կան դրված: ՄԻՊ գրասենյակը ինչպե՞ս է կարողանում լուծել դրանք: Ինչքանով են փոխվել գրասենյակի աշխատանքների ուղղությունները ևսխից պատերազմը և դրանից հետո:**

- Պատերազմից հետո Արցախի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի համար խնդիրները բազմապատկվել են: Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը երկու հիմնական ուղղություններով է իր աշխատանքները տանում: Առաջին ուղղությունը պատերազմից հետո ավելի ընդգծված դարձած՝ արտաքին աշխարհին Արցախի ժողովրդի խախտված իրավունքների վերաբերյալ իրազեկելն է, միջազգային ատյանների ուշադրությունը հրավիրելն այն պատերազմական հանցագործությունների վրա, որոնք իրականացրել են Ադրբեյջանն ու Թուրքիան 44-օրյա պատերազմի ընթացքում:

Երկրորդ ուղղությունը Սահմանադրությամբ մեզ վրա դրված կարեւորագույն գործառնություն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պատշաճ հարգումը: Մենք այս առումով վերահսկողական գործառնություն ենք իրականացնում: Պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների խախտման դեպքում մարդը կարող է դիմել և ստանալ մեր միջամտությունը՝ նախ արձանագրելու համար իր իրավունքների խախտումները, և երկրորդ՝ մեր միջամտությամբ վերականգնելու խախտված իրավունքները:

Միշտ էլ կատարելագործվելու են ավելի արդյունավետ աշխատելու տեղ կա, բայց եթե ընդհանուր գնահատական տալու լինենք, ապա կարծում եմ, որ իմ նշած երկու ուղղություններով էլ պատշաճ մակարդակով իրականացվում են աշխատանքները: Ավելի ճիշտ կլինի հանրությունը գնահատականը տալ, թե որքանով է մեր գրասենյակը կարողանում հետպատերազմյան դժվար օրերին իրականացնել իր գործառնությունն ու լիազորությունները:

**- Հաշվի առնելով Արցախի բնակչության համար առաջնային անվտանգության խնդիրը, չէ՞ք գտնում, որ ընդհանրապես իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները ստու՞մ են:**

- Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, նաև ՀՀ ՄԻՊ հաստատությունն այն եզակի կառույցներից են, որ ստիպված են բախվել այս իրողության հետ, նկատի ունեն կոնֆլիկտային, պատերազմական պայմաններում աշխատելը: Այս առումով շատ հաճախ տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների հետ քննարկումների ժամանակ մատնանշվում է, որ ես մեր կառույցը, ես ՀՀ ՄԻՊ կառույցը բավականին մեծ փորձ են կուտակել հենց ճգնաժամային իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության, փաստահավաք աշխատանքներ իրականացնելու ոլորտում: Բայց այնպես չէ, որ ՄԻՊ կառույցը հիմա է դրանով զբաղվում: 2016թ. մենք ես բախվել ենք նույն խնդրին, երբ ՄԻՊ գործունեության առաջնահերթությունների մեջ որոշակի վերաբեռումներ տեղի ունեցան և արտաքին դաշտին ավելի մեծ ուշադրություն դարձվեց:

Բայց պետք է վստահեցնել, որ դրանով ՄԻՊ-ը չի կորցնում իր սահմանադրական կարեւորագույն դերն ու նշանակությունը: Սահմանադրությամբ յուրաքանչյուր մարդու տրված է մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունք և ԱՀ տարածքում գտնվող յուրաքանչյուր քաղաքացի, յուրաքանչյուր մարդ կարող է օգտվել այդ իրավունքից: Եթե դիմում է մուտքագրվում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ապա այն հավուր պատշաճի, օրենքով սահմանված կարգով քննարկման է դրվում, որոշում կայացվում: Բայց պետք է նշել, որ եթե խաղաղ պայմաններում ապրող երկրի մարդու իրավունքների պաշտպանի հաստատություն լինեք, ապա շատ ավելի մեծ ուշադրություն կդարձվեր մշտադիտարկման, հետազոտական-վերլուծական գործառնություն: Բայց հաշվի առնելով այն, որ մենք այլ պայմաններում են այլ իրականության մեջ ենք ապրում, ունենալով փոքրաթիվ աշխատակազմ, պետք է առաջնահերթություններ ընդգծենք և շարժվենք ըստ դրանց: 2019թ. ՄԻՊ կառույցը մեծ հետազոտություն է սկսել երեխաների իրավունքների պաշտպանության և առկա օրենսդրության վերաբերյալ: Այս աշխատանքները, պատերազմով պայմանավորված, կասեցվել էին, և արդեն պատերազմից հետո՝

2021թ. հուլիս-օգոստոս ամիսներին, հրապարակվել է գեկույցը:

**- Ինչպիսի՞ գործիքակազմ ունի ԱՀ ՄԻՊ-ը Ադրբեյջանի Արցախի նկատմամբ կատարված հանցագործությունների համար պատժելու, միգրացե՞ն նաև դրանք կանխելու համար:**

- Երբեմն լինում են թուրքմբնուներ, որ ՄԻՊ կառույցը կարող է միջազգային դատական ատյաններում գործողություններ ձեռնարկել: Այդ իրավագործությունից, լիազորությունից մենք չենք օգտվում: Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն իրականացնում է փաստերի արձանագրման և դրանք միջազգային ատյաններին իրազեկելու գործառնություն: Մենք միջազգային դատարաններ դիմելու իրավասություն չունենք:



նենք, որովհետև դա պետությունների, կառավարությունների, առհասարակ անհատների իրավասության տակ է գտնվում: Օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար հայց կարող է ներկայացնել կամ տուժած քաղաքացին կամ տուժած քաղաքացու շահերը ներկայացնող փաստաբանական խումբը կամ պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչությունը:

Մեր ամենակարեւոր գործառնությունը միջազգային այն ատյաններին իրազեկելն է, որոնք ունեն իրավապաշտպան գործառնություն: Մեկուսացման պայմաններում ապրելով՝ շատ հաճախ Արցախի մասին օբյեկտիվ իրականությունը հասանելի չի դառնում միջազգային կազմակերպություններին կամ տարբեր պաշտոնյաներին, և պետք է կազմվեն գեկույցներ և անմիջապես դրվեն պատասխանատու պաշտոնյաների սեղաններին, որպեսզի նրանք թերթեն ու հասկանան, թե ինչ է կատարվում այստեղ: Մեր ներկայացրած ու հավաքագրած տվյալները ու դրանց հիմքով կազմված գեկույցները միջազգային հանրության հանրային կարծիքի, այդ թվում՝ քաղաքական գործիչների, պաշտոնյաների կարծիքի վրա ազդեցություն են թողնում: Օրինակ, ռազմագերիների հարցերով եվրոպական մի շարք երկրների պատասխանատու պաշտոնյաներ հայտարարություններ են արել, բայց չեն կարող ասել, որ մեր պատրաստած գեկույցները կամ մեր ներկայացրած տվյալները կանխելու ուղիղ մեխանիզմ են ապահովում:

**- Այդ առումով՝ ինչքանով կարող է օգտակար լինել ՀՀ ՄԻՊ հաստատությունը և հատկապես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բարձր վարկանիշը: Նրա գործունեությունը բարձր են գնահատում նաև միջազգային առումով:**

- Միանշանակ, ՀՀ ՄԻՊ հաստատությունը մեզ համար շատ արժեքավոր գործընկեր կառույց է: Արման Թաթոյանի գլխավորությամբ նրանք և պատերազմի ընթացքում, և դրանից հետո բացառիկ աշխատանք են իրականացնում՝ հանդիսանալով նաև մեր ծայր տարբեր մարմիններին հասանելի դարձնելու խողովակ: Մի շարք համատեղ գեկույցներ ենք պատրաստել և դրա նպատակն այն էր, որպեսզի երկու կառույցների համատեղ աշխատանքը երես նաև արտաքին դաշտում: Ի տարախություն մեզ են ՀՀ ՄԻՊ հաստատության, պետք է նշել, որ ԵԽԽԿ հատուկ գեկուցողի պատրաստած գեկույցում տարբեր իրավունքներին վերաբերող հարցերում հղումներ կան նաև այդ գեկույցներին, մշակութային ժառանգության մասին գեկույցին, որը մեր կառույցն առանձին է պատրաստել:

Մենք շատ հաճախ ենք իրար հետ տարբեր հարցեր քննարկում՝ կապված ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի, սահմանային միջադեպերի վերաբերյալ, որոնց մասին տեղյակ են պահվում միջազգային կազմակերպությունները: Իհարկե, ես մեր խողովակներով եմ այդ ամբողջ ինֆորմացիան հասանելի դարձնում միջազգային կազմակերպություններին և տարբեր ատյաններին: Բայց, ինչպես իրավագիտորեն նշեցիք, այսօր ՀՀ ՄԻՊ հաստատությունը բավականին մեծ հեղինակություն ու վարկանիշ ունեցող կազմակերպու-

թյուն է՝ իր պաշարադրական և իր բացառիկ իրավապաշտպան գործունեության շնորհիվ: Նրա խոսքն ընկալելի է միջազգային մարմինների կողմից, և շատ ուրախ եմ, որ այդ խողովակն ունենք: Երկու կառույցների միջեւ համագործակցությունն օրինակելի եմ որակում, և շատ ուրախ կլինեմ, եթե պետական այլ մարմինների միջեւ համագործակցությունը նույնպես այդ մակարդակին լինել:

**- Ինչքանով են Արցախում պաշտպանված մարդու իրավունքները, եթե չհաշվենք Ադրբեյջանի գործոնը:**

- Միանշանակ, որեւէ գնահատական տալը ճիշտ չէ: ՄԻՊ կառույցի ստեղծման և գործունեության հիմնական նպատակը հենց այն է, որ լինի այն գործիքը, մեխանիզմը, որ մարդու իրավունքների պաշտպանության, այսպես ասած, երաշխավորը հանդիսանա, իր իրավունքների խախտման դեպքում մարդը դիմելու, իրավական խորհրդատվություն ստանալու անհրաժեշտության դեպքում նաև ՄԻՊ կառույցի միջամտությամբ խախտված իրավունքները վերականգնելու հնարավորություն ունենա:

40000 տեղահանված կամ անօթեան մնացած բնակչություն ունենք, խախտված են նրանց անենաստարակական իրավունքները: Նման պայմաններում բարձրագույն խոսել, որ իրավունքների պաշտպանության պատշաճ մակարդակ ունենք, նման գնահատական չէի կարող տալ:

Ինչ վերաբերում է այն իրավունքներին, որոնք հետպատերազմյան իրողություններով չեն պայմանավորված, գնալով մարդկանց մոտ աճում է իրավագիտակցության աստիճանը, որ եթե խախտվեն իրենց իրավունքները, ապա նրանք պետք է ձեռնարկեն համապատասխան գործողություններ: Տարիների մեր գործունեությամբ հասարակության մոտ կասկած չպետք է լինի, որ մենք իրականացնում ենք այդ գործառնությունը:

**- Արդյո՞ք տեղահանվածների փոխարեն ավելի ճիշտ է օգտագործել «փախստականներ» տերմինը: Ո՞ր տեմինն է ճիշտ համարում նրանց խախտված իրավունքները ընդգծելու համար:**

- Փախստականի կարգավիճակ ստանալու համար մարդը պետք է պետական սահման հատի, այսինքն՝ եթե պատերազմի կամ այլ աղետի պատճառով անօթեան է մնացել և տեղափոխվել է այլ երկիր, քան իր հայրենիքն է: Մենք փաստացի չունենք նման իրավիճակ, ունենք բռնի տեղահանված անձինք, որոնք տեղահանվել են Արցախի Հանրապետության մի տարածքից մյուսը: Եվ փախստականի, և բռնի տեղահանվածի կարգավիճակը ներհայկական միջավայրում որեւէ բան չի փոխում: Նրանք երկու դեպքում էլ պետք է օգտվեն նույն աջակցություններից և արտոնություններից:

Իմ համոզմամբ, «բռնի տեղահանված» տերմինը ամենաճիշտն է օկուպացված տարածքների անօթեան մնացած բնակչությանը ներկայացնելու համար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ մեր վերջնականապես պետք է լինի, որպեսզի մեր բոլոր հայրենակիցները վերադառնան ու բնակվեն Արցախում:

**- Միջազգային հարաբերությունների ու քաղաքագիտության ոլորտում Ձեր կրթությունը ինչքանով է օգնում ՄԻՊ-ի աշխատանքում:**

- Միջազգային հարաբերությունների մասնագիտությունը համընդգրկուն է, որն իմ ուսումնառության շրջանում իր մեջ ներառել է տարբեր ոլորտներ՝ սկսած իրավաբանությունից, մինչև դիվանագիտություն և տնտեսագիտություն: Միջազգային հարաբերությունները միայն դիվանագիտությունը չէ: Այն և միջազգային իրավական, և տնտեսական, և քաղաքական-դիվանագիտական մակարդակն է: Ստացածս կրթությունը տվել է այն հմտությունները, որ կարողանամ այս պաշտոնում հեշտությամբ հաղթահարել իմ առջև դրված խնդիրները և առկա մարտահրավերները:

Մասնագիտության առումով լեզվի իմացությունը բավականին հեշտացնում է աշխատանքը դրսի հետ հարաբերություններում: Տարբեր կազմակերպությունների աշխատանքի ոճը, մեխանիզմներն իմանալը հեշտացնում է մեր խոսքը ավելի դյուրին տեղ հասցնել: Միջազգային իրավունքի դրույթներին ծանոթ լինելը հեշտացնում է գեկույցների պատրաստման գործընթացը: Ես ավելի կոնկրետ հենց «Միջազգային հարաբերություններ» մասնագիտության մասին խոսեցի, որովհետև այդ մասնագիտությունը կոնկրետ Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համար կարեւոր է՝ նկատի ունենալով, որ մեր ծայր պետք է որսի կողմից ընկալելի և հասանելի լինի: Իսկ ՄԻՊ կառույցը հիմնականում կազմված է իրավաբան-մասնագետներից: Մենք ունենք մասնագիտական ստորաբաժանում՝ ՄԻՊ աշխատակազմի դեպարտամենտը, որտեղ աշխատում են բացառապես իրավաբաններ: Նրանց աշխատանքը օրենսդրությանը և իրավունքներին հետեւելն է, նաև դիմումներ ընթացքավորելը, մշտադիտարկումներ իրականացնելը:

Հարցազրույցը՝ Տաթևիկ Աղաջանյանի





### Կորոնավիրուսային իրավիճակն Արցախում

Աշխարհում շարունակում է մոլեգնել մարդկության համար պատուհաս դարձած «Կորոնավիրուս»-ը: Աշխարհային սեզոնին այն սկսել է կտրուկ աճ գրանցել նաև Արցախում, որի պատճառով էլ սահմանվել է կարանտին: Հանրապետությունում ստեղծված համաճարակային իրավիճակի վերաբերյալ «Ապառաժ»-ը գրուցել է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ Օֆելյա Հարությունյանի հետ:



**- Տիկին Հարությունյան, ինչպե՞ս է համաճարակային իրավիճակն Արցախում:**

- 2021թ. Լոյտմբերի 17-ի դրությամբ՝ կատարվել է 20 648 թեստավորում, որից 3 294 անձի մոտ ախտորոշվել է կորոնավիրուս հիվանդությունը: Հոկտեմբեր ամսին ունեցել ենք 3 721 հետազոտություն, որից դրական էր 954-ը, որը կազմում է 26 տոկոս: Լոյտմբերի 1-13-ը հետազոտվել է 3 082 անձ, որից դրական 941 դեպք է հաստատվել, որը կազմում է 30,5 տոկոս: Համաճարակային իրավիճակը հանրապետությունում լարված է: Հոկտեմբերից արձանագրել ենք վարակման կտրուկ աճ, որը պայմանավորված է նոր կորոնավիրուսի դելտա շտամով: Ներկա պահին հիվանդանոցում բուժում է ստանում 132 անձ, որից, բժիշկների գնահատմամբ, ծայրահեղ ծանր վիճակում է գտնվում 20, իսկ ծանր՝ 54 անձ: 2021թ. 9 ամիսների ընթացքում գրանցվել է 17, հոկտեմբեր ամսին՝ 10, իսկ միայն Լոյտմբերի առաջին երկու շաբաթների ընթացքում՝ 21 մահվան դեպք:

- Ու՞ր է հիմնականում մահանում այս հիվանդությունից:  
- Մահացողները տարբեր տարիքի մարդիկ են, չպատվաստված մարդիկ են

եւ այն մարդիկ, ովքեր ունեն ուղեկցող այլ հիվանդություններ:

**- Ինչպիսի՞ միջոցառումներ կարող ենք ձեռնարկել վարակվելուց խուսափելու և վարակը չտարածելու համար:**

- Այս պահին աշխարհին հայտնի միակ միջոցը պատվաստվելն է: Բոլոր բնակիչները պետք է սա հասկանան, արագ պատվաստվեն, որպեսզի հիվանդության դեմ ձեռք բերենք կոլեկտիվ իմունիտետ և դուրս գանք այս տհաճ իրավիճակից: Կոլեկտիվ իմունիտետ ձեռք բերելու համար պետք է պատվաստվի գոնե ամբողջ բնակչության 70 տոկոսը: Սրան զուգահեռ պետք է պահպանել սոցիալական հեռավորություն, կրել դիմակ և հետեւել ձեռքերի հիգիենային:

**- Առ այսօր որքա՞ն մարդ է պատվաստվել Արցախում:**

- Սկսած հոկտեմբերի 2-րդ կեսից՝ Արցախում ակտիվացվել է պատվաստումների գործընթացը: Լոյտմբերի 1-ից մինչև 13-ը պատվաստվել է մոտ 988 մարդ, որը շատ քիչ է: Մայիսից առ այսօր պատվաստվել է ընդամենը 1991 մարդ:

**- Ո՞ր պատվաստանյութերն են կիրառվում Արցախում և որի՞ն են նախապատվություն տալիս քաղաքացիները:**

- Ունենք Աստրա զենեկա, Սպուտնիկ V, Մոդեռնա, Սինոֆարմ: Հիմնականում պատվաստվում են Սպուտնիկ V, սակայն վերջին օրերին նաև մյուսներով են պատվաստվում: Զաղաքացիները պատվաստվում են 2 դեղաչափով: 3-րդ դեղաչափ ստանալու մասին որոշում էլ կա, սակայն 6 ամիս հետո, եթե քաղաքացին ցանկանա 3-րդ դեղաչափ եւս ստանա, պետք է պատվաստվի Sputnik Lite-ով, որից դեռևս չունի Հայաստանը:

**- Ո՞ր պատվաստանյութերն են աչքի ընկնում իրենց արդյունավետությամբ:**

- Արդյունավետությամբ աչքի են ընկնում Աստրա զենեկան, հետո Մոդեռնան, որից հետո Սպուտնիկ V-ն և Սինոֆարմը: Սինոֆարմը և Մոդեռնան խորհուրդ է տրվում նաև հղիներին ու կերակրող մայրերին:

**- Որտե՞ղ են իրականացվում քաղաքացիների պատվաստումները:**

- Պատվաստումները կատարվում են «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, աշխատանքային օրերին, ժամը 09:00-19:00, իսկ շաբաթ օրը՝ 10:00-14:00, «Արեւիկ» մանկական բուժմիավորում ՓԲԸ-ում՝ ժամը 09:00-17:00, «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՊԱԿ-ում՝ ժամը 09:00-16:00, ինչպես նաև, աշխատանքային օրերին և ժամերին, շրջանային բուժմիավորումներում:

**- Վարակվածների մեջ կա՞ն պատվաստված քաղաքացիներ: Ի՞նչպես է ընթանում հետպատվաստման շրջանը քաղաքացիների մոտ: Հնարավո՞ր է կրկնակի վարակում:**

- Պատվաստվածների մեջ ունենք դեպքեր, որ վարակվել, սակայն թեթև ընթացք են ունեցել: Պատվաստման երկուսը ոչ թե վարակումը բացառել է, այլ թեթև ընթացք ապահովելը և մահերից խուսափելը: Պատվաստվածների մոտ կարող է ի հայտ գալ ջերմություն, սրտխառնոց, գլխացավ, մկանային ցավ և պատվաստման տեղը ցավ, այտուց և կարմրություն: Առ այսօր չի եղել պատվաստմից հետո ծանր ընթացք, հիվանդանոց դիմողներ չեն եղել: Հիվանդանալուց հետո 3 ամիս անց կարելի է պատվաստվել:

**- Ինչպիսի՞ հակահամաճարակային միջոցառումներ են իրականացվում հանրապետությունում:**

- Ա՛յն առողջապահության նախարարի Լոյտմբերի 4-ի թիվ 256-Ա հրամանով հաստատվել են 16 հավելվածներից բաղկացած հակահամաճարակային պահպանման կանոնները, որոնք նախատեսված են ըստ տարբեր աշխատանքային ոլորտների՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկությունները:

**- Ո՞վ է իրականացնում այս հակահամաճարակային կանոնների պահպանման վերահսկողությունը:**

- Վերահսկողությունը պետք է իրականացնի համապատասխան մարմինը, որն այս պարագայում առողջապահության նախարարությունն է, որը սակայն չի կարող իրականացնել նմանատիպ գործառնություններ: Ուստի, այս կանոնների պահպանման համար պետք է շահագրգռված լինեն շրջվարչակազմի ղեկավարները, քաղաքապետները, գյուղապետներն ու տնօրենները, ովքեր նաև պարտավոր են վերահսկել դրանց կատարումը:

**- Գյուղական համայնքներում ինչպե՞ս է կատարվում հնարավոր վարակվածների թեստավորումը:**

- Գյուղական համայնքներում ինչպե՞ս է կատարվում հնարավոր վարակվածների թեստավորումը:

- Գյուղական պայմաններում, եթե հայտնաբերվում է, տվյալ տարածքի հակահամաճարակային կայանը կազմակերպում է նմուշառում և այն տեղափոխում լաբորատորիա, որտեղ և ախտորոշվում է:

**- Կան մարդիկ, ովքեր հաշվի չառնելով իրենց մոտ ախտորոշված հիվանդությունը, թերահավատորեն վերաբերվելով վիրուսի գոյությանը, շարունակում են զնալ աշխատանքի, շփվել մարդկանց հետ: Ինչպե՞ս պետք է պայքարել այս երեւույթի դեմ:**

- Սա յուրաքանչյուրի խղճի հարցն է: Նման մարդիկ վտանգի տակ են դնում իրենց կոլեգաների, հարազատների կյանքը՝ դրսևորելով անպատասխանատու վերաբերմունք հասարակության նկատմամբ: Ավաղ, եթե յուրաքանչյուրս պատասխանատվությամբ մոտենայինք հարցին, շատ ավելի հեշտությամբ կհաղթահարեինք ստեղծված իրավիճակը:

Այսօր դժվար է վերահսկել քաղաքացիների շարժը՝ հատկապես արտակարգ դրության բացակայության պայմաններում, մասնավորապես՝ ՀՀ-ից ժամանողների պարագայում, քանի որ՝ եթե նախկինում նրանք չեմքազափվում է ստուգվում էին, ապա այսօր չունենք այդպիսի հնարավորություններ, նաև՝ Արցախում ստեղծված հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված: Բացի այդ, նախկինում թեթև ընթացք ունեցողները, նրանց շփման շրջանակը մեկուսացվում էին հյուրանոցներում, սակայն այսօր ազատ հյուրանոցներ չկան և հնարավոր չէ դա կազմակերպել:

**- Ըստ Ձեզ, ինչո՞ւ են քաղաքացիները խուսափում պատվաստվելուց:**

- Հակաքարոզչությունը շատ է անգամ բժիշկների կողմից, իսկ բնակչությունն էլ ավելի շատ հավատում է ֆեյսբուքում տեղ գտած ոչ հավաստի տեղեկատվությանը: Սակայն վերջերս բնակչությանը ապակողմնորոշող բժիշկները եւս սկսում են հասկանալ, որ պատվաստումն է միակ ելքը: Մարդիկ էլ են սկսում այդ մասին մտածել, քանի որ հոգնել են սահմանափակումներից և ցանկանում են ազատ տեղաշարժվել:

Քաղաքացիները պետք է հասկանան, որ այդ պատվաստանյութերն արտադրած երկրները դրանք արտադրել են առաջին հերթին իրենց երկրի բնակչության համար, հետևաբար, չեն կարծում, որ Ռուսաստանն իր պատվաստանյութով կարող է վնաս պատճառել սեփական քաղաքացիներին: Ուստի, պետք է հետեւություններ անել սրանից....

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

### Մեր ընկեր Արամը

2020թ. 44-օրյա պատերազմի օրերին, թշնամին խախտելով միջազգային բոլոր կոնվենցիաներն ու միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը՝ թիրախավորում ու ռմբակոծում էր քաղաքացիական բնակչությանն ու քաղաքացիական նշանակության օբյեկտները: Չարաբաստիկ այդ օրը՝ հոկտեմբերի 4-ին, թշնամին հրետակոծում էր մայրաքաղաք Ստեփանակերտը: Ստեփանակերտում Արցախի բնակչության շեղծության հրետակոծության հետևանքով՝ հերթապահության ժամանակ զոհվում է նաև ՀՀ-ի Արցախի տարածաշրջանի միջուկային անդամ, 19-ամյա Արամ Կառլոսի Գրիգորյանը:

Արամ Գրիգորյանը ծնվել է 2001թ. մարտի 7-ին Ստեփանակերտում:

2006 թվականից հաճախել է Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան N3 դպրոցը: 10-րդ դասարանը սովորել է Ստեփանակերտի Ֆիզմաթ, իսկ 11-12-րդ դասարանները՝ 8-րդ դպրոցում:

2017թ. ընդունվել է ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի Տեղեկատվական տեխնոլոգիաներ բաժինը: 3-րդ կուրսի ուսանող էր, երբ սկսվեց պատերազմը:

Իր բնավորությանը հավատարիմ՝ նա պատասխանատվությամբ ու գիտակցումով էր մոտենում իրեն վստահված աշխատանքին: Նրա ընկերներից՝ Սամվել Միլոնյանն ու ՀՀ-ի ԱԿՄ-ի անդամ Բենո Բաբայանը Արամին



միշտ իրենց կողքին են տեսել: «Ամեն հարցում մեզ հետ էր, մեր կողքին կանգնած», -ասում են նրանք: Բենոյի խոսքով՝ Արամը հաճախում էր ծրագրավորման դասընթացների, սակայն իր ապագան պատկերացնում էր շինարարության ասպարեզում: Սամվելը նույնպես հաստատում է Բենոյի խոսքերը: «Հոր հետ շինարարական ընկերություն էր ուզում հիմնել», - ասում է նա: Իսկ ՀՀ-ի ԱԿՄ-ի անդամ Ռիմա Մարտիրոսյանը Արամին

մին միշտ ուրախ է հիշում:

«Շատ անմիջական էր, նվիրված, ու եթե գիտեր, որ կարող է ինչ որ բանով օգնել, սրտանց օգնում էր բոլորին», - պատմում է Ռիման: Ուզում էր շուտ ամուսնանալ: Ռիման ժպիտով է հիշում, թե ինչպես էր ամեն անգամ Արամն ասում, որ Ռիման իր համար «տուն տանելու» աղջիկ պետք է գտնի: «Կատակով հարցնում էր՝ տարագով աղջիկ ես ուզում, ասում էր՝ այո, տարագով պետք է լինի», - նշում է նա:

Ռիման սովորում է Երեւանում, եւ կարծես զգում էր մոտավորապես արհավիրքի մասին, երբ պատերազմից մեկ օր առաջ զանգեց Արամին ու ասաց, որ շատ է կարոտել Արցախը, ուզում է վերադառնալ, ինչին ի պատասխան՝ Արամն ասաց, որ քիչ է մնացել, շուտով հետ կգա Արցախ: Ռիման Արամի հետ պարբերաբար խոսել է նաև պատերազմի օրերին ու նրա զոհվելուց մեկ օր առաջ:

«Լավատես էր ապագայի հանդեպ: Ամբողջ պատերազմի ընթացքում ինձ ու մեր միության բոլոր ընկերներին վստահեցնում էր, որ ամեն ինչ լավ է լինելու, շուտով վերջանալու է ամեն ինչ: Ամեն անգամ, երբ մի վատ լուր էինք լսում, նա առաջինն էր, որ ԱԿՄ-ի ընդհանուր խմբում արձագանքում էր և հավաստի տեղեկատվություն տրամադրում: Ասում էր, որ չվախենանք», - հիշում է Ռիման:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ



### 44-օրյա պատերազմը Լեռնային Ղարաբաղում

*Սկիզբը՝ Նախորդ համարներում*  
 Ներկայացնում ենք ամերիկյան բանակի թռչակառու փոխգնդապետ ղոկտոր-պրոֆեսոր Էդուարդ Ջ. Էրիքսոնի՝ 2020-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած պատերազմի մանրամասների և Ադրբեջանի ռազմավարական հաջողության պատճառների մասին վերլուծության հայերեն թարգմանությունը:  
 «Ապառաժ»-ն ամբողջովին չի կիսում հոդվածում տեղ գտած տեսակետներն ու եզրակացությունները:

Միջազգային լրատվամիջոցներին հաջողվել էր լուսաբանել հայկական զինտեխնիկայի՝ հատկապես տանկերի և գրահատեխնիկայի ոչնչացումը թուրքական գերճշգրիտ ԱԹՍ-ների և ինքնառնչացող (կամիկաձե) զենքերի միջոցով: Ի պատասխան՝ հայկական հակատանկային հրթիռային համակարգերին ու հրետանուն հաջողվել էր մեծ վնաս հասցնել Ադրբեջանին. վերջինս տվել է մեծաքանակ զոհեր: Այնուամենայնիվ, այն ժամանակ ճշգրիտ հարվածների տեսահոլովակները դիտելով՝ արտաքին աշխարհը չկարողացավ որոշել մարտերի իրական ընթացքը:

Պատերազմի առաջին երեք օրերին կողմերը միմյանց լուրջ վնասներ էին հասցնում. կորուստների մեծ մասը եղել է Ադրբեջանական կողմի՝ հայկական խիստ ամրացված դիրքերի ուղղությամբ հարձակումներ կատարելու ընթացքում: Սակայն մինչև այս դիրքապահներն առաջնագծում մահաբեր մարտեր էին մղում, Ադրբեջանցիները, օգտագործելով հեռահար զենքեր, պայթյալ խորացրին թիկունքում: Նրանք օգտագործեցին խորայնական բալիստիկ հրթիռներ և թուրքական «Bayraktar TB2» ԱԹՍ-ներ, ինչը հնարավորություն տվեց հարվածել հենց Հայաստանին: Լրատվական բաց աղբյուրների հաղորդմամբ՝ Ադրբեջանական բալիստիկ հրթիռները սեպտեմբերի 30-ին հարվածել են Մարտակերտ քաղաքին, իսկ սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 1-ը՝ Հայաստանի Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքին (Գեղարքունիքը գտնվում է ՀՀ տարածքի խորքային մասում, իսկ Մարտակերտը՝ Ստեփանակերտից դեպի հյուսիսարևելյան ճակատ տանող ճանապարհին): Նաև հաղորդվել էր, որ Ադրբեջանցիներն օգտագործել են իսրայելական «Լորա» կարճ հեռահարության բալիստիկ հրթիռներ՝ քանդելու Արցախը Հայաստանին միացնող հիմնական ճանապարհի կամուրջները: Արցախի ներսում Ադրբեջանը ձեռնարկեց հարձակումներ՝ կաթվածահար անելու են արգելափակելու հայերի (կամ մարտադաշտի) համար մարտավարական նշանակության հաղորդակցության միջոցները: Ընդհանուր առմամբ, հայկական կողմի թիկունքային սմանատիպ արգելափակումները և խափանումները շուտով խաթարեցին Նյութատեխնիկական պաշարների և զինամթերքի պատշաճ մատակարարումը դեպի առաջնագիծ, իսկ կենսական անհրաժեշտ պաշարները սկսեցին վերջանալ, որից հետո հայերը պետք է պայթարեին և պաշտպանեին իրենց:

Պարզվում է, որ որոշ հատվածներում Ադրբեջանը հասել էր իր՝ պատերազմի ծրագրի սկզբնական կետերի իրականացմանը դեռևս հոկտեմբերի 3-ին. արդեն այդ ժամանակ հայերը կորցրել էին հարյուրավոր տանկեր, հրետանային և հրթիռային արձակման բազմաթիվ համակարգեր, բեռնատարներ և մեքենաներ: Ավելին, նրանք կորցրել էին մեծ քանակությամբ զինամթերքի պահեստներ, մեկ տասնյակ հրամանատարական կետեր և մեծաքանակ զինամթերքի ու սննդի մատակարարման բեռնատարների շարքայում: 2020թ. հոկտեմբերի 3-ին Ալիեի գրասենյակը հրապարակային հայտարարություն տարածեց՝ նշելով, որ Թալիշի, Ֆիզուլիի (Վարանդա) և Ջաբրայիլի (Ջրական) մոտակայքում գտնվող գյուղերն ազատագրված են: Ալիեյը նաև հայտարարեց, որ հայ հրաձիգներն Ազդերտում Ադրբեջանական ծանր հրետակոծության պատճառով լքում են իրենց դիրքերը: Կարելու է նաև, որ Ալիեյը Մատաղիսի ազատագրման կապակցությամբ շնորհավորեց 1-ին բանակային կորպուսի հրամանատար Հիքմետ Հասանովին: Երկու օր անց Ադրբեջանական կառավարությունը հայտարարեց Ջաբրայիլի (Ջրական) եւս 3 գյուղերի ազատագրման մասին: Այս հայտարարությունների բովանդակությունից ակնհայտ էր, որ պատերազմի ընթացքն արդեն հօգուտ Ադրբեջանի էր:

Մինչև հոկտեմբերի 7-ը Ադրբեջանի ՊՆ-ն հաղորդեց, որ Արաքսի հովտում գտնվող հայկական զորագնդերը սննդի, վառելիքի և զինամթերքի խիստ կարիք ունեն, ինչի պատճառով այստեղ համատարած դասալքություն է: Հաջորդ երկու օրերին Նախարարությունը հաղորդեց, որ ավելի շատ գյուղեր են ազատագրվել, և որ հայկական ստորաբաժանումները փորձում են նահանջել կամ ցերեկը հետ քաշվել այլ տեղեր, սակայն բոլոր դեպքերում Ադրբեջանական ավիացիան ոչնչացնում է նրանց: Ամբողջ ժամանակաշրջանում ևս հաջորդ շաբաթներին հայերը բալիստիկ հրթիռներով շարունակել են հարվածներ հասցնել Ադրբեջանական քաղաքներին: Հայկական բանակը ձեռնարկում էր նաև հակազորներ՝ կորցրած տարածքները հետ բերելու



համար, սակայն բոլորն ավարտվում էին անհաջողությամբ: Ադրբեջանի զինված ուժերը հստակորեն տիրապետում էին օպերատիվ և մարտավարական իրավիճակին: Հոկտեմբերի 10-ին նրանք ազատագրեցին Ջաբրայիլը (Ջրական) և հարակից գյուղերը՝ ճեղքելով հայկական պաշտպանության հիմնական բնագիծը: Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում էին, որ հայկական ստորաբաժանումները, թողնելով բազմաթիվ զրահամեքենաներ և սարքավորումներ, նահանջեցին դեպի հյուսիս՝ դեպի Հադրութ քաղաք: Հայտարարվեց, որ առաջխաղացում կա նաև Խոջավանդի (Մարտունի) և Ֆիզուլիի (Վարանդա) շրջաններում, Արաքսի հովտում: 2-րդ կորպուսն առաջացավ դեպի Չանգեյան (Կովսական):

Ադրբեջանական բանակը հետապնդեց նահանջող հայերին մինչև Հադրութ, իսկ հոկտեմբերի 13-ին գրավեց դեպի քաղաք Նայոլ բարձունքները: Մարտերի մանրամասնությունները հայտնի չեն, բայց արդեն 2 օր անց Հադրութը և շրջակա բարձունքներն անցել էին Ադրբեջանական կողմի վերահսկողության տակ: Այս հաղթանակը մարտավարական տեսակետից բարելավեց Ադրբեջանի դիրքերը՝ դեպի Լաչինի միջանցք շարժվելու համար: Սակայն Արաքսի հովիտը պիտի ամբողջությամբ մաքրվեր, որպեսզի անվտանգ կարողանային առաջ ընթանալ: Հզոր հարձակումները մաքրեցին Խոջավանդը (Մարտունի) ու Ֆիզուլին (Վարանդա): Հոկտեմբերի 18-ին Ռուսաստանի միջնորդությամբ մարդասիրական հրադադար կնքվեց, որը շատ կարճ պահվեց և չգնահատեցրեց Ադրբեջանական կողմի արձագանքը: Մինչև հոկտեմբերի 20-ը 2-րդ կորպուսը գրավեց Կովսականը (Չանգեյանը) և նրա շրջակայքը, իսկ հոկտեմբերի 23-ին Ալիեյը հայտարարեց, որ Ազբանդ բնակավայրը ազատագրված է՝ վստահեցնելով, որ այն ապահովում է իրանական սահմանի լիակատար վերահսկողությունը: Այս հայտարարություններից կարող ենք եզրակացնել, որ 2-րդ կորպուսն ապահովել էր Արաքսի հովտի վերին և ստորին հատվածների վերահսկողությունը: Հոկտեմբերի 26-ին Ամերիկայի միջնորդությամբ կնքված մարդասիրական հրադադարն անմիջապես խախտվեց: Այսպիսով, չնայած ահռելի Նյութատեխնիկական կորուստներին և զոհերին՝ մոտավորապես 2020թ. հոկտեմբերի վերջին Ադրբեջանի զինված ուժերը հաջողությամբ ավարտեցին ծրագրված պատերազմի առաջին փուլը:

#### Ծրագրված պատերազմի վերջին փուլը

Մինչ օրս փաստացի հայտնի չէ, թե Ադրբեջանական բանակը 44-օրյա պատերազմի ընթացքում ինչպիսի հրամանատարական կառուցվածք է ունեցել: Այնուամենայնիվ, հայտնի է, որ պատերազմի վերջին փուլի համար Ադրբեջանը ձեռավորել է «Համատեղ կորպուս»՝ հատուկ զորքերի փոխգնդապետ գեներալ Միրզաբեյի հրամանատարությամբ: Հոկտեմբերի 29-ին Ադրբեջանի հատուկ զորքերը առաջ մղվեցին Հադրութից դեպի հյուսիս, գրավեցին Չանախի (Ավետարանոց) գյուղը՝ հայտնվելով Շուշիից և Լաչինի միջանցքից 20 կմ հեռավորության վրա: Սակայն գոյություն ունեցող ճանապարհը Հադրութը չէր միացնում միջանցքին՝ ստիպելով թեթև զինված հատուկ զորքերին շարժվել դեպի արեւմտյան խորհուրդը լեռնային հատվածը: Հայկական համառ դիմադրությունը ձախողեց Ադրբեջանցիների՝ Լաչինը գրավելու փորձերը:

Այդուհանդերձ, մինչև Նոյեմբերի 4-ը Ադրբեջանցիները Շուշիից հարավ կտրել էին Լաչին-Ստեփանակերտ ճանապարհի 3 կիլոմետրը: Մինչ այդ, նրանք շաբաթներ շարունակ պարբերաբար հրետակոծում և հրթիռակոծում էին Շուշիում տեղակայված հայկական ստորաբաժանումները, սակայն այժմ վերջնական հարձակման համար այն առավել ուժեղացավ: Վերջնական հարձակումը սկսվեց Նոյեմբերի 4-ին և, ըստ լրատվամիջոցների, այն շատ արյունալի էր: Բանակի հրետանու և օդուժի ճշգրիտ հարվածների ուղեկցությամբ հաջորդ օրը Ադրբեջանական հատուկ զորքերը բարձրացան քաղաքի արեւմտյան մասի բարձունքը, իսկ Նոյեմբերի 6-ին մտան Շուշի քաղաքը: Երկու օր անց Ալիեյը հայտարարեց հաղթանակի մասին, մինչդեռ Միրզաբեյի հրամանատարությամբ հատուկ զորքերն ընդլայնեցին իրենց հարձակման պարագիծը: Շուշիից դեպի հյուսիս հայկական ուժերին հետ շարժեցին եւս 2 կիլոմետր և շարժվեցին դեպի արեւելք՝ գրավելու Շուշեյնը (Շոշը): Ադրբեջանի զինված ուժերի՝ Շուշիում տարած հաղթանակը ազդարարեց պատերազմի ավարտի մասին և հանգեցրեց կրակի դադարեցման այնպիսի պայմանների, որոնք թելադրում էր Ադրբեջանը:

2020 թ. Նոյեմբերի 9-ին Ալիեյը, Փաշինյանը և Պուտինը ստորագրեցին ռազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագիր: Նրանք հայտարարեցին, որ Ռուսաստանի միջնորդությամբ կնքված պայմանագիրը ուժի մեջ կմտնի հաջորդ օրը, երբ ռուս խաղաղապահները կտեղակայվեն Լաչինի միջանցքում՝ դրա անվտանգությունն ապահովելու համար: Ի գարմանս շատերի՝ փաստաթուղթը հրադադարի համաձայնագիր լինելուց շատ ավելի հեռու գնաց: Հայաստանը փաստացի կապիտուլյացեց և անվերապահորեն Ադրբեջանին հանձնեց Արցախի տարածքի մեծ մասը: Ըստ համաձայնագրի՝ այն տարածքները, որոնք գրավել էր Ադրբեջանը, մնում էին իր հսկողության տակ: Հայաստանը պարտավորվում էր Նոյեմբերի 20-ին զորքերը դուրս բերել Ադրամի (Ավես) շրջանից, 25-ին՝ Զեյթաշարի (Շահումյան) շրջանից, իսկ մինչև դեկտեմբերի 1-ը՝ Լաչինի (Զաշաթաղ) շրջանից:

Կային նաև այլ դրույթներ, որոնցից Ադրբեջանի համար ամենակարեւորը Նախիջեւանին կապող ցամաքային տարանցիկ ճանապարհի ստեղծումն է, իսկ Հայաստանի համար՝ ռուսական հսկողության տակ գտնվող Լաչինի միջանցքի Լաչին-Ստեփանակերտ ճանապարհի անվտանգության ապահովումը: Սա Ադրբեջանի համար ցնցող և բոլորովին անկանխատեսելի արդյունք էր, որովհետեւ կրճատվեց Արցախի տարածքի 2/3-ը, Արցախը դարձավ շրջափակված ու կախված հեշտությամբ թիրախավորվող միջանցքից: Համաձայնագիրը զգալիորեն թուլացրեց Փաշինյանի վարչակազմը և վերջինիս դրեց ամբողջական փլուզման վտանգի տակ:

*1/2 արունակելի/ Թարգմանեց Լ. Իշխանյանը*

### Հայտարարություն

Կորել և Ռուբեն Վլադիկի Խաչատրյանի՝ Երեւանի պետական համալսարանի կողմից 2018թ. տրված ճառագայթային ախտորոշման կլինիկական օրդինատուրայի դիպլոմը:  
 Համարել անվավեր:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ  
 Ստեփանակերտ, Կունյանցների 17,  
 հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com  
 Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաև նյութեր, որոնցում արձարձված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԿ ԴԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 800: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր  
 Ա. Պուլուզյան